Իններորդ հաղորդում

Աստծու տաճարը՝ Աստծու փառքով լցված

Գրվածքների ընթերցում. Ելց 24:16, 40:34-35, Ա Թգ 8:10-11, Գրծ 7:2, 55, Հվի 17:22, Եփս 3:21, Հյտ 5:13, 21:9-11

I. Փառքն Աստծու հատկանիշներից մեկն է. փառքն Աստծու արտահայտությունն է, փառահեղության մեջ արտահայտված Աստված՝ Ելց 24:16, Գրծ 7:55:

II. Աստծու փառքը լցրեց խորանն ու տաճարը.

Ա. «Ամպը ծածկեց Ժողովքի Վրանը, և Եհովայի փառքը լցրեց խորանը»՝ Ելց 40:34.

1. Այն օրը, երբ խորանը բարձրացվեց, երբ ամպն իջավ ու ծածկեց այն, և երբ Աստծու փառքը մտավ ու լցրեց այն, մեծ օր էր՝ խխ. 2, 34-35.
   - ա. Նրանք, ովքեր հավաքվել էին Ժողովքի Վրանի շուրջը, տեսան ամպը, մինչդեռ քահանայապետը, որն ի վերջո մտավ Սրբությունների Սրբությունը, տեսավ խորանի ներքին փառքը՝ Ղտց 16:15, Եբր 9:7:
   - բ. Սա ցույց է տալիս, որ եկեղեցական կյանքի մեր փորձառության մեջ մենք պետք է առաջ գնանք՝ մտնելով խորանը՝ Քրիստոսի՝ որպես Աստծու մարմնավորման մեջ՝ սեղանի մոտ վայելելու հացը և խնկարկության զոհասեղանի մոտ բարեխոսելու, որպեսզի կարողանանք փորձառաբար ապրել Աստծու բնակատեղի փառքը՝ Ելց 40:34-31, Հվի 1:14:
2. Ամպով ծածկված ու փառքով լցված խորանը մեծ օրհնություն էր Իսրայելի զավակների համար, բայց այսօր մենք այն բանի իրականությունն ունենք, ինչը նրանք միայն նախապատկերով ունեին՝ 14:2-3, 6, 10-11, 16-18, 20, 26, Եփս 2:18-22, 3:16-21:

Բ. «Եհովայի փառքը լցրեց Եհովայի տունը»՝ Գ Թգ 8:11.

1. Տաճարը՝ երկրի վրա Աստծու ընդհանրական արտահայտությունը և բնակատեղը, լցված էր Աստծու փառքով՝ խխ. 10-11:
2. Եհովայի փառքը լցրեց Եհովայի տաճարը՝ երկիր բերելով երկնքում եղող Աստծուն և երկիրը միացնելով երկնքին՝ խ. 11:
3. Ծնդ 28-րդ գլխում Հակոբը երազ տեսավ, որ «երկրի վրա մի սանդուղք էր դրված, և դրա գագաթը հասնում էր երկինք» (խ. 12), և նա ասաց, որ «սա ոչ այլ ինչ է, եթե ոչ Աստծու տունը, և սա է երկնքի դարպասը»՝ խ. 17.
   - ա. Այնտեղ երկինքն իջավ երկիր, և երկիրը սանդուղքով միացավ երկնքին:
   - բ. Այս սանդուղքը Քրիստոսի մի նախատիպ է, ով, որպես Մարդու Որդին՝ Իր մարդկայնությամբ հանդերձ, սանդուղքն է, որը կանգնեցված է երկրի վրա և տանում է դեպի երկինք, երկինքը երկրի

համար բաց է պահում և երկիրը միացնում է երկնքին Աստծու տան՝ Բեթելի համար՝ Հվի 1:51, Ծնդ 28:19:

գ. Այսօր երկնային Աստված իջնում է երկիր, և երկիրը մեր մեջ բնակվող Քրիստոսով միացած է Աստծուն՝ Կղս 1:27:

դ. Աստված ոչ միայն իջավ երկնքից, այլև Նրա շեքինայի փառքը լցրեց տաճարը՝ Գ Թգ 8:10-11:

III. Եռամեկ Աստված փառքի Աստված է՝ Գրծ 7:2, 55.

Ա. Աստված փառքի Աստված է՝ խխ. 2, 55.

1. Ամեն անգամ, երբ Աստված արտահայտվում է, դա փառք է. անտեսանելի Աստված Աստված է, իսկ տեսանելի Աստված՝ փառք՝ Ելց 13:21:
2. Փառքի Աստված հայտնվեց Աբրահամին, կանչեց նրան և աշխարհից առանձնացրեց առ Աստված. նա գրավվեց և գերվեց այդ փառքով՝ Գրծ 7:2:

Բ. Եփս 1:17-ում Պողոսն օգտագործում է «փառքի Հայրը» եզրույթը.

1. Փառքի Հայրն Իր բազում որդիների միջոցով արտահայտված Աստված է՝ Եբր 2:10:
2. «Հայր» տիտղոսը ենթադրում է վերածնունդ, իսկ «փառք» բառը՝ արտահայտություն. հետևաբար «փառքի Հայր» տիտղոսը ենթադրում է վերածնունդ և արտահայտություն:

Գ. Քրիստոս Որդին և Հայր Աստված նույնն են փառքում՝ Հվի 17:5.

1. Քրիստոսն Աստծու փառքի լուսափայլությունն է. Որդին Հոր փառքի շողալն է՝ պայծառությունը՝ Եբր 1:3ա:
2. Քրիստոսը փառքի Թագավորն է, զորքերի Եհովան (այսինքն՝ բանակների), ավարտուն Եռամեկ Աստված՝ մարմնավորված հաղթական ու եկող Քրիստոսի մեջ՝ Սղմ 24:7-10, Ղկս 21:27, Մտթ 25:31:
3. Քրիստոսը փառքի Տերն է՝ Ա Կրթ 2:7-8.
   ա. Քրիստոսը մեր կյանքն է այսօր և մեր փառքը՝ ապագայում՝ Կղս 3:4, 1:27:
   բ. Աստված մեզ կանչել է այս փառքի համար, և Նա մեզ կբերի դրա մեջ՝ Ա Պտ 5:10, Եբր 2:10:

Դ. Ա Պտ 4:14-ը խոսում է «փառքի և Աստծու Հոգու» մասին.

1. Փառքի Հոգին Աստծու Հոգին է:
2. Փառքի Հոգին Նա է, ում միջոցով Քրիստոսը փառավորվեց Իր հարության մեջ՝ Հռմ 1:4:
3. Փառքի այս Հոգին հանգչում է հալածանքից չարչարվող հավատացյալների վրա՝ հարուցանված և բարձրացված Քրիստոսին փառավորելու համար, ով հիմա փառքի մեջ է՝ Ա Պտ 4:13-14:

IV. Աստծու փառքը խորքային կերպով կապված է Աստծու տնտեսության հետ՝ Ա Տմթ1:4, Եփս 1:10.

Ա. Աստծու հավիտենական նպատակն Իր բազում որդիներին փառքի մեջ

բերելն է հավիտենական ընդհանրական արտահայտության՝ Նոր Երուսաղեմի համար՝ Եբր 2:10, Ա Կրթ 2:7, Եփս 1:5-6, 12, 14, Հյտ 21:7, 9-11:

Բ. Աստված մեզ նախասահմանել է, որ Իր փառքը ձեռք բերենք, որպեսզի արտահայտենք Իրեն. ուստի Աստծու նախասահմանման նպատակը մեր փառավորումն է՝ Ա Կրթ 2:7:

Գ. Աստված մեզ ստեղծեց Իր պատկերով որպես պատվի անոթների՝ փառքի համար պատրաստված. մենք Նրա գերիշխանությամբ նախասահմանված էինք լինելու Նրա անոթները, որպեսզի արտահայտենք այն, ինչ փառքի մեջ Նա է՝ Ծնդ 1:26, Հռմ 9:21, 23:

Դ. Քրիստոսի փրկագնումն իրագործել է Աստծու փառքի պահանջը՝ 3:23-25, Եբր 9:5, հմմտ Ծնդ 3:24:

Ե. Աստված Իր փառքի ավետարանի միջոցով մեզ կանչել է Իր հավիտենական փառքով և դրա մեջ՝ Բ Կրթ 4:4, Ա Տմթ 1:11, Ա Թսղ 2:12, Ա Պտ 5:10, Բ Պտ 1:3:

Զ. Համաբովանդակ Քրիստոսը բնակվում է մեր մեջ որպես փառքի հույսը՝ Կղս 1:27, 3:4, 11:

Է. Երբ մենք հայում ենք Տիրոջ փառքին և արտացոլում այն, փառքից փառք փոխակերպվում ենք Տիրոջ պատկերին՝ Բ Կրթ 3:18:

Ը. Հայր Աստված շարժվում է մեր ներսում որպես ամեն շնորհքի Աստված, որպեսզի մենք կարողանանք մասնակցել Իր հավիտենական փառքին և նույնիսկ դառնանք Աստծու փառքը՝ Ա Պտ 5:10:

Թ. Աստծու փառքն Աստծու տնտեսության մեջ ներառում է աստվածային հայտնության գագաթնակետը. Աստված մարդ դարձավ, որպեսզի մարդը կյանքով, բնությամբ և գործառույթով, բայց ոչ Աստվածությամբ, դառնա Աստված՝ Հվի 1:14, Հռմ 8:3, 1:3-4, Կղս 3:4, Եբր 2:10, Հյտ 21:10-11:

V. Հվի 17:22-ում Տեր Հիսուսն աղոթեց. «Այն փառքը, որը տվել ես Ինձ, Ես տվել եմ նրանց, որպեսզի նրանք մեկ լինեն, ինչպես որ Մենք մեկ ենք».

Ա. Այն բանից հետո, երբ Տերն աղոթեց միասնության երկու փուլերի համար՝ միասնությունը Հոր անվան մեջ հավիտենական կյանքի միջոցով (խխ. 6-13) և միասնությունը սուրբ խոսքով սրբացման միջոցով (խխ. 14-21), Նա աղոթեց երրորդ փուլի համար՝ հավատացյալների միասնության աստվածային փառքում՝ Եռամեկ Աստծու ընդհանրական արտահայտության համար՝ խխ. 22-24:

Բ. Քանի որ այն փառքը, որը Հայրը տվել է Որդուն, Որդին մեզ է տվել, իսկական միասնությունն աստվածային փառքի մեջ է՝ խ. 22.

1. Փառքը Հոր կողմից Որդուն տրված որդիությունն է՝ Հոր աստվածային կյանքով և բնությամբ հանդերձ՝ Հորն Իր լիությամբ արտահայտելու համար՝ խխ. 1, 5, 22:
2. Փառքի չորս տեսանկյուններ կան՝ որդիությունը, Հոր կյանքը, Հոր աստվածային բնությունը և Հոր արտահայտությունն Իր լիությամբ. այս չորս բաները հավասար են այն փառքին, որ մենք ունենք Որդու

մեջ և որը Որդու կողմից մեզ է տրվել՝ Եփս 1:5, 4:18, Ա Հվի 5:12, Բ Պտ 1:4, Հյտ 21:9-11:

Գ. Միասնության երրորդ փուլում հավատացյալները, իրենց «ես»-ը լիովին մերժած լինելով, վայելում են Հոր փառքը՝ որպես իրենց կատարելագործված միասնության գործոնը և այդպիսով ընդհանրականորեն, կառուցված ձևով արտահայտում Աստծուն՝ Հվի 17:22.

1. Միասնության միայն երրորդ փուլում մենք բացարձակապես կատարելագործված կլինենք միասնության մեջ՝ Տիրոջը դրսևորելու և փառավորելու համար:
2. Մենք կունենանք Աստծու կյանքը, Աստծու բնությունը և նույնիսկ հենց Աստծուն, որպեսզի դառնանք Աստծու դրսևորումը և արտահայտությունը՝ խ. 22:

VI. Եփս 3:21-ում Պողոսը հռչակում է. «Նրան լինի փառքը եկեղեցում և Քրիստոս Հիսուսի մեջ բոլոր սերունդներում հավիտյանս հավիտենից: Ամեն».

Ա. Մենք ներամրապնդվում ենք մեր ներքին մարդու մեջ՝ Աստծու փառքի հարստության համաձայն. սա ենթադրում է, որ Աստծու փառքը կարող է ներդրվել սրբերի մեջ՝ խ. 16, Բ Կրթ 3:18:

Բ. Եփս 3:21-ի «Նրան լինի փառքը» արտահայտությունը ենթադրում է, որ Աստծու փառքը, որը ներդրվել է սրբերի մեջ, վերադառնում է Աստծուն:

Գ. Այս փառքը մեզ մոտ գալիս է Աստծու հետ և մեր մեջ ներդրվելուց հետո մեզ հետ կվերադառնա Աստծուն. այսպես է Աստված եկեղեցում փառավորվում՝ խխ. 16-21:

Դ. Այս երկկողմ երթևեկի միջոցով եկեղեցին՝ որպես տիեզերքում եղող երախայրին (Հկբ 1:18), առաջինն է Աստծուն փառք տալիս.

1. Աստծու փառքը ներդրված է եկեղեցում, և Նա արտահայտված է եկեղեցում՝ Եփս 1:22-23, 2:21-22, 3:16-17, 19բ:
2. Եկեղեցում փառքն Աստծունն է, այսինքն՝ Աստված փառավորվում է եկեղեցում՝ խ. 21:
3. Աստված կփառավորվի ոչ միայն այս դարաշրջանում՝ եկեղեցու դարաշրջանում, այլև գալիք՝ թագավորության դարաշրջանում և դարաշրջանների դարաշրջանում, որը հավիտենությունն է՝ Մտթ 6:13, 29, Հռմ 16:27, Հյտ 5:13, 21:10-11:
4. Որպեսզի Աստված բոլոր դարաշրջաններում փառավորվի, ներկա դարաշրջանից մինչև հավիտենություն, Նա պետք է փառավորվի եկեղեցում և Քրիստոսի մեջ՝ Եփս 3:21:

VII. Նոր Երուսաղեմի ակնառու հատկանիշն այն է, որ այն ունի Աստծու փառքը՝ Նրա արտահայտությունը՝ Հյտ 21:11, 23.

Ա. Նոր Երուսաղեմը՝ որպես հավիտենությունում Աստծու ընդհանրական արտահայտություն, կրում է Աստծու տեսքը՝ Աստծու փառքի մեջ արտահայտելով Նրա պատկերը՝ խխ. 10-11, 4:3:

Բ. Ամբողջ Նոր Երուսաղեմ քաղաքը կրում է Աստծու փառքը, որն Աստված Ինքն է, ով շողում է քաղաքի միջոցով՝ 21:11ա.

1. Աստծու փառքը Նոր Երուսաղեմի բովանդակությունն է, որովհետև քաղաքը լիովին լցված է Նրա փառքով. սա ցույց է տալիս, որ Նոր Երուսաղեմը Աստծուն պարունակող անոթ է և արտահայտում է Նրան:
2. Աստծու փառքն իրականում Աստված Ինքն է, ով դրսևորվում է. հետևաբար այն, որ սուրբ քաղաքը լի է Աստծու փառքով, նշանակում է, որ Աստված դրսևորվում է այս քաղաքում:

Գ. Աստծու փառքը՝ արտահայտված Աստված, լուսավորում է Նոր Երուսաղեմը՝ շողալով հասպիսե պատի միջով՝ խխ. 23, 18ա.
1. Նոր Երուսաղեմի լույսը նման է հասպիս քարի, մաքուր, ինչպես բյուրեղը՝ խ. 11բ:
2. Աստծու փառքը շողում է սուրբ քաղաքի պարսպի միջով Քրիստոս Գառան՝ որպես ճրագի մեջ՝ խխ. 23, 18ա:

Դ. Աստված Նոր Երուսաղեմն է, և Աստծուն փառավորել նշանակում է Նրան ընդունել որպես Նոր Երուսաղեմի և ամբողջ փառքը տալ Նրան՝ խ. 22, Հռմ 15:5-7.
1. Աստծուն փառավորել նշանակում է մասնակցել Նոր Երուսաղեմին՝ Հյտ 3:12, 21:11:
2. Միայն այն ժամանակ է Աստված տիեզերքում իսկապես փառավորվում, երբ մենք Նոր Երուսաղեմում արտահայտում ենք Աստծուն՝ Հռմ 16:27, Ա Կրթ 10:31:

Ե. Որպես Նոր Երուսաղեմ՝ մենք կլինենք Աստծու փառքի գովքի համար՝ Եփս 1:12.
1. Հավիտենությունում Աստծու բոլոր որդիները լիովին կհագեցվեն Աստծով և կարտահայտեն Աստծուն՝ Եբր 2:10:
2. Աստված կարտահայտվի Իր փառավորված որդիների միջոցով, և այս արտահայտված Աստված փառք է՝ Հյտ 21:7:
3. Տիեզերքի բոլոր հրեշտակները և դրական բաները կփառաբանեն արտահայտված Աստծուն. ուստի մենք՝ Աստծու փառավորված որդիներս, կլինենք Նրա փառքի գովքի համար՝ Եփս 1:12:

© 2022 Living Stream Ministry